մրցիլ որպէս գեղարուեստական մի անձնուիրութիւն. ու ընթերցողը վերջին բոպէին նրա հետ յուսահատ թափառում է՝ Սեւանի ժայռերի մէջ՝ մարդկանցից հեռու ու հոգու հանգիստ չէ գտնում: Նա անվերջ պրպտողն է ու անյաջող պայքարողը կեանքի ու լոյսի դէմ, ուստի եւ մութ անկիւններն է փնտռում մարդկանց չերեւալու համար:

Չգիտեմ ինչո՞ւ եւ ինչպէ՞ս ոմանք գտեր են որ այս գրուածքը տռամա չէ: Ինձ թւում է որ այստեղ մի մեծ թիւրիմացութիւն կայ: Տռամական ճիգեր ունենալու համար անհրաժէշտ չէ որ ենթական անպատճառ իր դիմացը իրապէս մարդ ունեն ունենայ. ոչ: Իր խիղճը, իր սիրտը, իր հոգին, իր միտքը բաւական տարրեր են եւ շատ զօրեղ որ տռաման հետզհետէ խորանայ ու խտանայ: Աբեղան մինակ է, բայց ապրած է բազմաթիւ էակների շրջանում: Այդ էակները իր հետ են, իրենից անբաժան, իր մէջ: Տռամը իր մէջ է կատարւում ու ամէնէն ցաւագին կերպով: Նրա մտքի ուղին այնպէս խախտուած է որ աշխարհի բոլոր օրէնքները նրա տրամադրութեան տակ են. նոյն վայրկեանի մէջ նա եւ եկեղեցումն է, եւ մեհեանի մէջ, եւ իր խցումն է, եւ Սէդայի կողքին, եւ պարիկների աշխարհում եւ ունայնութեան գաղափարի հանդէպ:

Իրր հիմնական պակասութիւն այս գրուածքի՝ ես մատնացոյց կ'անեմ այն հանգամանքը որ այս երկու կարեւոր դէմքերն էլ իրենց գոյութեան կռուանը հաստատում են պատահմունքի վրայ: Դէպքերն են նրանց դարձնում հերոսներ: Մէկին անյաջող սէրը քշում է դէպի վանք, միւսին միակողմանի սէրը վանքից դուրս է քաշում: Ճիշտ է որ կեանքի մէջ դէպքերը շատ ճակատագիրներ են որոշում, բայց դա սովորական մարդկանց է յատուկ, մինչ հերոսների նկարագրին կազմելուց առաջ նրանք ունենում են իրենց անցեալը, որի վրայ պէտք է հիմնուին:

Գրուածքի միւս դէմքերը, Ճերմակաւորը, Իշխանուհին, մանաւանդ Կոյր վանականը շատ աւելի յաջող՝ թէեւ փոքրիկ տիպարներ են: Դրանք լրացնում են Աբեղայի եւ Վանահօր գեղարուեստական պատկերները: